

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՀՐԱՉԻ ՀԱԿՈՐԶԱՆՅԱՆ

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական
լեզվահասարակագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ք.գ.դ.,պրոֆ. Լ .Ս.ՅՈՎՍԵՓՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ք.գ.դ.,պրոֆ. Գ.Կ. Խաչատրյան

ք.գ.թ., դոց. Ա.Ս. Աբրահամյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 14.03.2016թ., ժամը 15:00
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում
(հասցեն՝ ք.Երևան, 0015,Գրիգոր Լուսավորիչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան Լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 13.02.2016թ.

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ն.Ս.Սիմոնյան

Թեմայի արդիականությունը: Ընդհանուր լեզվաբանության, հաղորդակցման տեսության, խոսքի և խոսույթի տեսության, հոգելեզվաբանության կողմից *խոսույթում կրկնվող կառույցների, նրանց դրսևորումների և գործառույթների* վերաբերյալ տարբեր ժամանակներում կատարված տեսական ընդհանրացումներն ի մի են բերվում մեկ ընդհանրական դաշտում և, փորձարկվելով ատենախոսության նյութի սույն հետազոտությամբ սահմանված լեզվական, խոսքային և հաղորդակցաիրադրական արտաքին և ներքին նոր հատկանիշներով, ստանում են նկարագրության և դասակարգման ամբողջականություն: Թեմայի արդիականությունն արտացոլվում է նաև խոսույթի կրկնության բացահայտված այն ընդհանրություններում և առանձնահատկություններում, որոնք ներկայանում են որպես հայերենի և հունարենի խոսույթներում հանդիպող կրկնվող կառույցների բնութագրեր:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ լեզվաբանական գրականության մեջ առաջին անգամ են ներկայացվում`

- կրկնությունների համակարգային նկարագրության և բազմահատկանիշ տիպաբանության կառուցման խնդիրը` ընդգրկելով կրկնություն-գործառույթ լծորդության յոթ անփոփոխակներ և նրանց տարբերակները,
- կրկնության Բ եզրի կառույցները և հետազոտությամբ բացահայտված 5 կառուցվածքային տիպերը,
- իմաստային կրկնության` մեր կողմից սահմանված 11 տեսակներ, դրանց հատկանիշներն ու օրինակները,
- համագործակցային գործառույթներով կրկնությունները` խոսույթի մասնակիցների «համաձայնությունից» «անտարբերություն» բևեռների միջև գտնվող վարմունքային 10 պահերի գործաբանական բազմազանությունը:

Սույն **աշխատանքի նպատակն է** կատարել զեղարվեստական խոսույթում հանդիպող կրկնության դրսևորումների ուսումնասիրություն, խոսույթի տարբեր բաղադրիչների ներդրումների միջոցով սահմանել նրանց անփոփոխակային գործառույթներն ու դրանց տարբերակները, տարբերական չափանիշները, պարզել, թե որոնք են, ինչ ձևեր կարող են ստանալ և ինչ ներդրումներ իրականացնել խոսույթում: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրել ենք հետևյալ **խնդիրները`**

- խոսույթի կրկնությունների բարձր հաճախականությունն արդյոք օգնու՞մ է որոշակի տեղեկատվության արտահայտմանը, թե կրկնությունը բովանդակային դատարկություն է:

- ի՞նչ դեր ունեն կրկնության տեղեկատվության համար խոսքի մասնակիցներն ու նրանց տարբեր բնութագրերը, խոսքին ուղեկցող իրադրությունը, հաղորդակցման միջավայրը, հարալեզվական ու արտալեզվական գործոնները և այն ամենը, ինչ վերջին շրջանում հասկանում են ժամանակատեղային /քրոնոտոպ գործոններ ասելով:

- խոսույթի կրկնության ո՞ր հատկանիշներն են թույլ տալիս առանձնացնել նրա գործառույթները որպես միավորներ:

- հնարավոր կլինի՞ արդյոք կրկնության դրսևորումների տարատեսակ բազմության վերլուծության հիման վրա ձեռք բերած արդյունքներն ամփոփել սեռանիշ և տեսականիշ համակարգային տիպաբանական դասակարգման մեջ:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Հետազոտությունը տեսական արժեք է ներկայացնում թե՛ մասնավոր, թե՛ ընդհանուր, թե՛ տիպաբանական լեզվաբանության և թե՛ հաղորդակցման ու խոսույթի տեսությունների համար, քանի որ լեզվական օրինակների հիման վրա արվում են ընդհանուր լեզվաբանական՝ անդրլեզվական և տիպաբանական եզրակացություններ: Փորձ է արվում տեսականորեն որոշարկելու կրկնության բերած ներդրումները որպես հաղորդակցման գործառույթների տեսակներ, որոնց տրվում է տիպաբանություն կառուցող հատկանիշների կարգավիճակ: Աշխատանքի տեսական պրպտումներից է նաև իմաստային կրկնության լայն դաշտի տրոհման փորձը ըստ նրբիմաստների:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Խոսույթում կրկնության գործառույթների համակարգային բնութագրումը և տիպաբանական դասակարգումը՝ որպես հետազոտության արդյունքներ, կարող են լայնորեն կիրառվել մի շարք ոլորտներում, ինչպես՝

- «Ընդհանուր լեզվաբանության», «Հոգելեզվաբանության», «Խոսույթի և տեքստի տեսության», «Տեսական և գործնական հաղորդակցության», «Միջմշակութային մասնագիտական հաղորդակցության» գիտակարգերի դասավանդման մեջ:

- Իմաստային կրկնության հետազոտության որոշ արդյունքներ կարող են օգտագործվել բառարանագրության մեջ:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսության նյութի հավաքումը կատարել ենք ուսումնասիրված աղբյուրներում հանդիպած կրկնությունների բազմության *զանգվածային ընտրանքի մեթոդով*, որով երկ-

լեզվյան կրկնությունների ուսումնասիրության համար ձևավորել ենք բավարար պաշար: Ատենախոսության մեջ կրկնության տեսակները լուսաբանել ենք դասակարգված նյութը ներկայացնող *առավել բնութագրական նմուշների ընտրության մեթոդով*: Հետազոտության հիմնական մեթոդներից կիրառվել է *նկարագրականը*, որն իրականացվել է երկխոսությունների դիտարկման, համեմատության (համադրում-հակադրում, նույնացում-նմանեցում-տարբերակում), ընդհանրացման-մասնավորեցման, վերացարկման-կոնկրետացման, եզրահանգման-մեկնաբանման ընդհանուր իմացաբանական մեթոդներով: Երբեմն դիմել ենք *արտածական կադապարավորման մեթոդին*՝ դրանով ճշտելով կրկնության հնարավորությունների և դրանց լեզվական իրական դրսևորումների հարաբերակցությունը: Իմաստային կրկնությունների տարրերն ուսումնասիրել ենք *բառիմաստների բաղադրիչային վերլուծության մեթոդով*: Կրկնության տեսակներն ու դրանց գործառույթները բնութագրել ենք հաղորդակցության գործոնների՝ խոսքի, արտալեզվական միջավայրի և խոսքային իրադրության *զուգահրդական հետազոտության մեթոդով*, քանի որ տեքստային տվյալները միայնակ ի գորու չեն պարզաբանելու կրկնության բերած տեղեկատվության խնդիրները:

Կրկնություն-գործառույթների համակարգային հետազոտության համար առանձնացրել և ուսումնասիրել ենք այնպիսի հատկանիշներ, որոնք, մեր կարծիքով, անհրաժեշտ և բավարար են կրկնության տեսակների համապարփակ տիպաբանական դասակարգման համար:

Հետազոտության նյութը հայերեն (արևելահայերեն, արևմտահայերեն, գրաբար) և հունարեն գեղարվեստական և դրամատիկական, ծիսական և նման բնույթի տեքստերից քաղված երկխոսության, մենախոսության, բազմախոսության և հեղինակային խոսքի կրկնություն պարունակող արձակ և չափածո նմուշներ են: Կրկնության դրսևորումները լուսաբանելիս հայերեն և հունարեն օրինակները դիտել ենք իբրև անդրլեզվական համարժեք միջոցներ և նույն գործառույթը լուսաբանել երկու լեզվից վերցված համագործինակներով:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք զլխից, եզրակացություններից, գրականության ցանկից (5 լեզուներով շուրջ 170 աղբյուր) և հավելվածներից: Աշխատանքի ծավալը 133 էջ է:

Ատենախոսության բովանդակությունը: Ներածության մեջ հիմնավորվում են ատենախոսության հիմնական դրույթները՝ հետազոտության արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունն ու հետազոտության նյութը, ներկայացվում է հարցի տեսության համառոտ ակնարկ:

Թեմայի ընտրությունը հիմնավորվում է նրանով, որ չնայած խոսույթի մեջ կրկնության դրսևորումների և դրանց գործառնությունների հետազոտությանը նվիրված ծավալուն գրականության առկայությանը, մինչև այսօր դեռ չի արվել կրկնության մի այնպիսի ուսումնասիրություն, որն առավել համակարգային մոտեցումով ներկայացներ նրա բազմաթիվ ձևերն ու գործառնությունները խոսույթում: Կարծում ենք՝ նման վիճակը հետևանք է այն բանի, որ խոսույթի կառույցների կրկնության ձևերն ու նրա գործառնությունների տարբերակները լեզուներում հանդես են գալիս որպես «թաքնըված կարգ»¹, քանի որ խոսույթում դրանք ներկայացնող երևույթների անվերջավոր բազմությունը, դրսևորման հատկանիշների հարափոփոխությունը և բազմազանությունը, բազմության մեջ անփոփոխակների բացահայտման դժվարությունները, ուսումնասիրողների կողմից տրված դրանց տարբեր անվանումները՝ կրկնություն, կուտակում, շրջասություն, զուգահեռույթ, շրջում (հակադասություն, շարախախտում և հերթաշրջում տեսակներով), բանադարձում, հարակրկնություն (անաֆորա), նույնաբանություն (տավտոլոգիա), հոմանիշություն, առձայնույթ (ալիտերացիա) և այլն,²

կրկնության և հարակից երևույթների անորոշ սահմանները, վերջիններիս նկատմամբ կրկնության բազմակողմանի տեղաշարժերը և այլն *հասկանալի են դարձնում կրկնության դրսևորումները հետազոտման նույն դաշտում միավորելու դժվարությունը:*

Իրականում ոչ միայն կրկնությունն է «թաքնըված կարգ»: Նրա գործառնությունների մեկնաբանմանը նպաստող խոսքի և դրան ուղեկցող իրադրական պայմանների հնարավորությունները նույնպես «թաքնըված են»: Այդ պատճառով խոսույթի կրկնության վերլուծությունը, բացի խոսքի տվյալներից, լայնորեն հաշվի է առնում միջավայրը, ակտանտների խորքային հարաբերու-

¹ Есперсен.О., Философия грамматики. М.:Изд. Ин. лит.,1958, 404 с.

² Tannen Deborah, "What's in a Frame? Surface Evidence for Underlying Expectations". In R. Freedle, New Directions in Discourse Processing. Norwood, 1979: N.J.: Ablex, 137-181. Եզեկյան Լ., Յայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, 375 էջ:

յուններն ու մակերեսային կառույցներուն ասույթների ստորոգման հատկանշային մեկնաբանությունը, հնչերանգը և այլն, որոնցով հաղորդունը միշտ ավելի ծավալուն է ստացվում խոսքի բովանդակությունից: Այս առումով է. Աթայանը խոսույթում տեսնում է վերաբերության չորս կերպավորում՝ լեզվական, առարկայական, իրադրական և միջավայրային, որոնց բացահայտումներն էական նշանակություն ունեն խոսույթի կրկնության բերած տեղեկատվության ամբողջական բնութագրման համար:³

Առաջին գլխում, որը վերնագրված է «Կրկնության ուսումնասիրությունը գիտական գրականության մեջ», երկու ենթազուխներով ներկայացվում են «Կրկնության վերլուծությունը հոգելեզվաբանության մեջ և ավանդապահ ժողովուրդների խոսույթներում» և «Կրկնության վերլուծությունը տեքստի և խոսույթի տեսության մեջ»:

Ելնելով գրավոր և բանավոր տեքստերում ունեցած ոճական դրսևորումներից, դերից և զբաղեցրած տեղից՝ ավանդապահ հանրությունների հաղորդակցության մեջ խոսույթի կրկնության ուսումնասիրությունն ի հայտ է բերում տեքստակենտրոն գործառույթներ՝ *տեղեկատվական հոսքի հսկում*, *տեքստի կապակցում* և *սոցիալական խմբերում համագործակցության ամրապնդում հույզերի միջոցով*: Խոսույթի տեսության մեջ երևույթն ավելի խոր վերլուծության է ենթարկվել. դրանցից իր հետևողականությամբ առանձնանում է Գ.Պերսլնի աշխատանքը, որտեղ ներկայացվում են կրկնության գործառույթների *ուժգնացնող*, *ապրումակցային*, *միավորող*, *ընդօրինակող*, *տարրական*, *պարզ* և *կանխամտածված* տեսակները: Սակայն տարբեր լեզվաբաններ չեն հստակեցնում կրկնության գործառույթների ամփոփոխակներն ու տարբերակները, դրսևորման հաճախականությունը չունեցող դիպվածային գոյացությունները, որոնք համակարգային մոտեցման դեպքում չեն պահպանում տարբերակման օրինաչափությունը: Մյուս կողմից՝ մեր հետազոտության արդյունքում բացահայտվել են կրկնության նոր գործառույթներ և հատկանիշներ: Ուստի բազմաթիվ հարցեր դեռևս մնում են անպատասխան: Ի՞նչ է կրկնությունը: Ինչպե՞ս է խոսակցի կամ ունկնդրի հիշողության մեջ կրկնորդը «նույնանում» մատրոյ կրկնյալի հետ: Ի՞նչ է կրկնության բերած «միջտեքստայնությունը»: Որո՞նք են և ինչի՞ հետևանք են

³ Աթայան է., Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, ԵՊՀ, 1981, էջ 225:

կրկնությամբ դրսևորվող գործառույթները: Արդյո՞ք լեզվի բոլոր մակարդակներում կրկնությունը նույն գործառույթն է կատարում: Արդյո՞ք տարբեր են նույն կամ այլ խոսողի կատարած կրկնությունները: Ուրիշ ինչպիսի՞ ձևեր կարող են ստանալ կրկնություն համարվող լեզվական կառույցները: Ի՞նչ գործառույթ կարող է ունենալ մեկ կրկնությունը:

Նշված հարցերից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում կրկնության ուսումնասիրությունը տեղափոխել մեկ այլ հարթություն, որը հնարավորություն կտա միասնական դաշտում միավորելու հետազոտությունների տարասեռ արդյունքները՝ դարձնելով այն առավել ամբողջական և կապակցված:

Երկրորդ գլխում՝ «Կրկնության դասակարգման չափանիշները», ներկայացված են «Կրկնության սահմանումը և պայմանները», «Կրկնության արտալեզվական գործոնները», «խոսույթի կրկնության սերումը լեզվի մակարդակներում», «խոսույթի կրկնության սերումը խոսքային ակտում» և «Իմաստային կրկնություն» հինգ ենթագլուխները:

Այս գլխում, Գ.Բաբինիոտիսի կողմից⁴ կրկնությանը տրված սահմանումն ընդլայնելով խոսույթի կրկնության բնութագրման համար անհրաժեշտ լրացուցիչ հատկանիշների ընտրությամբ, ներկայացվում է խոսույթի «կրկնություն-գործառույթ» լծորդության աշխատանքային սահմանումը, որը, իբրև գործիքակազմի հիմք, հետագայում կիրառվում է կրկնության գործառույթների բնութագրման և տիպաբանական դասակարգման մեջ: Որպես այդպիսիք առանձնացվում են հատկանիշների չորս դաս՝ *խոսքային միջավայրի տվյալները, հնչերանգը, հաղորդակցմանը նախորդող և հաջորդող տեղեկատվական ներդրումները և շրջաման հնարավորությունը*: Մեր ուսումնասիրության նպատակների թելադրանքով կրկնությունների միջատարածքը, ձևերը, կրկնվելու «պատիկությունը» և կրկնության բերած տեղեկատվությունը նույնպես մանրամասն ուսումնասիրվում են որպես «կրկնություն-գործառույթ» լծորդության որոշարկման համար անհրաժեշտ տվյալներ: Իմաստային կրկնությունների ուսումնասիրությունը ներկայացրել ենք այս գլխում, քանի որ դրանք օգնում են կրկնության գործառույթների մեկնաբանմանը, սակայն այլ գործառույթներ չեն իրագործում: Իմաստային

⁴ Μπαμπινιώτης Γεώργιος Γλωσσολογία και λογοτεχνία (από την Τεχνική στην Τέχνη του Λόγου). Αθήνα. Τζαφτζάνος Αχιλλεύς Α. 1946-1963 (ανατ.): Νεοελληνική σύνταξις (της Κοινής Δημοτικής), τόμ. Α: Αθήνα 1946, ΟΕΣΒ, τόμ. Β: Αθήνα 1953 ΟΕΔΒ. 1991:

կրկնություններն այստեղ քննարկվում են ավանդական լեզվաբանության համար «չափից» ավելի ընդարձակ շրջանակում կրկնության իմաստային բաղադրիչների մեկնաբանման նոր լույսի տակ:

Տեքստի լեզվաբանության և հարակից գիտությունների քննարկումների ուսումնասիրությունից հետո մեզ համար գործաբանական լրացուցիչ խնդիրներ են մնում պարզելու, թե ինչ նպատակների է ծառայում կրկնությունը, որոնք են նրա կենսունակության և բազմաձևության պատճառները, ինչպիսին է կրկնության վերաբերությունը ամենօրյա խոսքի կառուցման կարիքներին, որոնք են նրա ձևերը:

Երրորդ գլխում, որի վերնագիրն է «խոսույթի կրկնության գործառույթների դասակարգումը», տարբեր ենթագլուխներով ներկայացված են մեր առանձնացրած յոթ *գործառույթների* և նրանց տարբերակների հետազոտությունները խոսույթի կրկնության մեջ: Մանրամասն քննարկված են դրանցից յուրաքանչյուրի *բնույթը, դրսևորման առանձնահատկությունները, Ա և Բ եզրերի արտահայտման հնարավոր ձևերը*: Վերջում կրկնության առավել ամբողջական բնութագրման նպատակով բոլոր կրկնություն-գործառույթները ստորև ներկայացված հաջորդականությամբ քննարկվում են մի քանի հայեցակետերով, որոնցից են *կրկնության արտահայտման ձևերը, կրկնության սերունդը նույն կամ այլ խոսողի կողմից և դրանց միջատարածքը, կրկնությունների ճանաչման չափանիշները, խոսող-խոսակից-հաղորդում կապի տեսակը, կրկնության տեղեկատվությունը*, որոնք առավել ամբողջական են դարձնում ամեն մի կրկնություն-գործառույթի բնութագիրն ու հստակ տեղն ընդհանուր տիպաբանական դասակարգման մեջ:

Ներդրում շեշտող կրկնությունն աչքի է ընկնում շեշտի կամ այլ ցուցիչների շնորհիվ և «ՇԵՇՏՈՒՄ ԵՄ» բայաձևով շրջասելու հնարավորությամբ: Նրա խնդիրը կրկնվող ամբողջ հաղորդման կամ նրա որևէ կառույցի կատարած ներդրման շեշտումն է խոսողի կողմից: Այն ունկնդրին «հուշում է», թե ինչու չի ներկայացվում իմացական նոր տեղեկատվություն և կրկնությունը գործում է որպես հետհաղորդակցական նշան: Հին տեղեկության շեշտումը կատարվում է խոսողի ցանկությամբ և մեզ համար դառնում տարբերակիչ հատկանիշ: Նման կրկնությունը, բացի շեշտից, կարող է ուղեկցվել նաև այլ ցուցիչներով (քեզ եմ ասում, լսի՛ր ինձ, տե՛ս՝ ինչ եմ ասում և այլն):

Հանդիպող բազմաթիվ անվանումներից ատենախոսության մեջ շրջանառել ենք «ներդրում, շեշտում» եզրերը, որոնք հնարավորություն են

տալիս արտահայտելու շեշտման ուժեղ և թույլ աստիճանները, ինչպես նաև պարզ ցուցիչները՝ *այո*, *ոչ* և այլն, որոնք առավելապես կապված են եղածի գնահատման հետ: Ջ.Սիրըլի բացահայտած Ա կողմի կատարած կրկնության խոսքային 5 գործողությունների վրա հիմնված արտահայտություններն էլ՝ *նկարագրական, ուղղության, արտահայտիչ, հայտարարող և պատճառական*, հանդիպում են մեր օրինակներում:

Ա: - «Թե ինչն են ատում, չգիտեմ, բայց զգում եմ, որ տղաների այսօրվա արածն են ատում: Դա են ատում: Այ, հենց դա է, որ ես ատում եմ» (Կրկնում ու շեշտում են, որ տղաների այսօրվա արածը ատում են (Վ.Սարոյան):

Հուզական լարում արտահայտող կրկնությունն առանձնացրել ենք որպես կրկնության մի նոր և առանձին տեսակ, որը հանդիպում է շեշտման ընդհանուր կարգում, բայց *իմացական* շեշտումից տարբերվում է *հուզական* շեշտման հատկանիշով: Այն բնութագրվում է *միջավայրի տվյալներով* և խոսողի հուզական լարվածությունից բխող *բացականչական շեշտով*, սակայն չի կարող բնութագրվել «շեշտում են» բայի շրջաստությամբ (դա է նրանց տարբերակիչ հատկանիշը): Նրանց տեքստային բավանդակությունը թույլ է, քանի որ կառուցված է խոսողի հուզական ներաշխարհի արտահայտման և ոչ թե ունկնդրի տեղեկացման նպատակով: Նրանց տեղեկատվությունը ներգործող բնույթ ունի և նման կրկնությունը՝ որպես հետհաղորդակցական նշան, ընդամենը «տեղեկացնում է» խոսողի հուզական լարման մասին՝ չենթադրելով անգամ ունկնդրի առկայություն: Խուռն զգացումները խոսողին դրողում են կրկնելու կառույցը, և զուցե այդ պահին մի այլ, համարժեք արտահայտություն չգտնվելու պատճառով զգացմունքը ելք է փնտրում՝ անցնելով խոսքի սահմանափակող հնարավորությունների նեղ անցուղիներով՝ Ա: - Վառվեցեք, մոխի՛ր դարձեք, դուք շատ եք այրել իմ սիրտը (Ա.Շիրվանզադե): Որոշ հուզական կրկնություններ իմացական բովանդակություն են արտահայտում՝ **«A: Σκοτώθηκε. / Ա: - Մահացա՛վ: B: Τον σκοτώσανε./ B: - Նրան սպանեցին»** (Καμπανέλλης Γ.), իսկ մյուսներն այն կարող են չունենալ:

Համագործակցության գործառույթով կրկնությունները հանդես են գալիս նույն կամ այլ խոսողի կողմից Ա եզրին հարող միջատարածքում և բնութագրվում են կամ ցուցիչներով, կամ որպես կրկնության Բ եզր հանդես գալով: Նրանք կարող են շրջասվել «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ», «ՀԵՏԵՎՈՒՄ ԵՄ ՔՈ ԽՈՍՔԻՆ», «ԱՆՏԱՐԲԵՐ ԵՄ ԱՍԱԾԻԴ ՀԱՆԴԵՊ» և այլ արտահայտություններով, քանի որ նրանց նպատակն է իբրև ընկալման ցուցիչներ ցույց տալ, որ

Ա կողմն ըմբռնված է փոխազդեցական տեղեկատվության մակարդակում: Նրանք միտված են ունկնդրին և ներկայանում են որպես հետհաղորդակցական նշան, քանի որ նրանց տեղեկատվությունը ներգործող բնույթ ունի: Ըստ խոսողի համագործակցության առաջարկի նկատմամբ խոսակցի դրսևորած արձագանքների՝ առանձնացրել ենք համագործակցության գործառույթի հետևյալ տեսակները՝ *համաձայնության, հաստատման, տարակուսանքի կամ կասկածի, անհամաձայնության, հակադրության, մերժման և հանդման, զրույցին հետևելու հավաստման, զրույցին ընթացք տվող-զրույցի շարունակումը քաջալերող, զրույցն ընդհատելու դրդող և անտարբերության:* Մեր կողմից նշված համագործակցության դեպքերից մի քանիսի վերաբերյալ գրականության մեջ կան հիշատակումներ, սակայն նրանց առանձին որակների հատուկ ուսումնասիրություն չի կատարվել:⁵

Ա: - Գիտեմ: Բ:- Դե՛հ, ես ինքս էլ գիտեմ, որ դու գիտես, բայց հո բոլորը չես գիտենալ... (Դ. Դեմիրճյան)՝ **զրույցը շարունակելու հորդոր:**

Հատկանշական է, որ համագործակցային գործառույթի համաձայնության տարբերակն ուղղված է Ա կողմին և փոխարինվում է ոչ թե «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ», այլ ավելի թույլ՝ «ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ» բայի շրջասությանը. սա է դրանց տարբերակիչ հատկանիշը: Մեր կարծիքով, եթե խոսակիցը խոսողի ման տեղեկացված չէ, չի կարող հաստատել կամ ժխտել նրա ասածը, ուստի կարող է միայն համաձայնվել կամ չհամաձայնվել:

A: - Δηλαδή έχει κάνει μπάνια ο άνθρωπος. / Ա: - Այսինքն, մարդը լողացել է:

B: - Θά 'χει κάνει μπάνια... (Συμφωνώ ότι: θά'χει κάνει μπάνια) / Բ: - Λողացած կլինի (ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ, որ լողացել է) (Κεχαϊծής Δ.): Դեպքը լիարժեք կերպով հաստատելու համար Բ կողմը պետք է ունենար Գ. Ջահուկյանի բացահայտած «ականատեսության» իմույթը⁶, այդ պատճառով խոսակիցն ընտրում է բայի ոչ ականատեսային ժամանակային ձև, որի հետևանքով «հաստատում եմ»-ը

⁵ Tannen Deborah, "What's in a Frame? Surface Evidence for Underlying Expectations". In R. Freedle, *New Directions in Discourse Processing*. Norwood, 1979: N.J.: Ablex, 137-181. Keenan Elinor Ochs, "Making it last: repetition in children's discourse". On S. Ervin-Tripp and C. Mitchell-Kernan, 1977: 125-138 և ուրիշներ:

⁶ Ջահուկյան Գ., ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները, Ե., Ակադ., 1974, 587 էջ:

փոխարինվում է «համաձայն են» վարկածային ձևով, որը և թուլացնում է վկայման հավաստիությունը:

Բովանդակային արձագանքման կրկնությունները հիմնականում ներգործող տեսակի են, այսինքն՝ պահանջում են պարզաբանումներ և նախագգուշացնում հաջորդող տարածայնության մասին: Կրկնության այս կարգում քննված *պարզաբանման* և *տարածայնության* գործառույթները համագործակցության գործառույթից տարբերվում են ոչ թե բովանդակությամբ, այլ Բ կողմի արտահայտության ձևով. այստեղ խոսողը ոչ թե միանգամից իր վերաբերմունքն է արտահայտում լսածի նկատմամբ, այլ, որպես լսածի արձագանք, նախ կրկնում է խոսողի ներդրումը կամ դրա մի մասը, հետո միայն ցույց տալիս պարզաբանելու իր պահանջը կամ տարածայնությունը: Այս հանգամանքի շնորհիվ նրանք չեն կարող շփոթվել կրկնության համագործակցային գործառույթի «անհամաձայնության» և «հակադրության» տեսակների հետ: Այդ գործառույթի ցուցիչներից են գլխավորապես հարցական հնչերանգը, երբեմն՝ հարցական բառույթը: Նրանց տեղեկատվությունը միշտ ուղեկցող կասկածն է, միայն թե մի դեպքում խոսողին տրվում է ինքն իրեն շտկելու և պարզաբանելու հնարավորություն, մյուս դեպքում՝ միանգամից արտահայտվում է տարածայնություն: Օրինակ՝

Ա: - Թույլ չի տա: Բ: - Թույլ չի՞ տա: Իսկ եթե թու՞յլ տա (Վ.Սարոյան):

Հունարենում սույն գործառույթը շարահյուսական ազատություն ունի՝ «ի՞նչ» հարցով կրկնելու Ա եզրի ցանկացած կառույցը:

A: - Και το πόδι του: / Ա: - Իսկ նրա ո՞տքը: B: - Τι το πόδι του: / Բ: - Ի՞նչ նրա ոտքը (Καρράς Σ.): Կամ՝ A: - Τι: / Ա: - Ի՞նչ: B: - Ε, τι τι: Που δε φοβάστε λέω... / Բ: - Ε-է՛հ, ի՞նչը ինչ: Որ չէք վախենում, ասում են (Μουρσέλας Κ.):

Հունարենի գրավոր տեքստերում տարածված այս կառույցը որքան էլ կիրառելի է հայերեն բանավոր խոսքում, սակայն գրավոր տեքստերում օրինակներ չենք գտել:

«Աղմուկի» պատճառով կրկնությունը բնութագրում ենք ունկնդրի արձագանքի բացակայությամբ, որն «աղմուկի» հետևանք է: Նրա Բ եզրը ունկնդրի կողմից չի ընկալվում որպես կրկնություն, քանի որ ունկնդիրը տեղյակ չէ Ա եզրի գոյության մասին: Աղմուկը որոշակիորեն աղճատում է հաղորդվող տեղեկատվությունը և լեզվական կողավորումը, իսկ հաղորդակցումն այն հաղթահարելու ուղիներ է փնտրում: Այդ ուղիներից մեկը խոսակցի պահանջով ձևավորված կրկնությունն է, որը կոչում են «աղմուկի»

հետևանքով կրկնություն»։ Այս կարգին ենք դասում հաղորդման ցանկացած աղավաղման պատճառով ստեղծված կրկնությունները, ինչպես՝

Ա: - Իսկ վերնաշապի՞կը, է՛յ: /Բ: - Ի՞նչը /անջատելով ցնցուղը /:

/Ա: - Վերնաշապի՞կն էլ արդուկեն (Վ.Սարոյան):

Ատենախոսության մեջ վերլուծվում են աղմուկի բազմաթիվ իրադրություններ, որոնք այստեղ առավել կարևորություն են ստանում կրկնություն սերելու պատճառով:

Պատկերավորման գործառնություն կրկնության համար բնութագրական է, որ այն նկարագրական ձևով է արտահայտում որևէ իրադարձության շարունակականությունը, տևականությունը կամ բազմակիությունը: Այն ուղղված է ունկնդրին և, հակառակ կրկնության այլ կարգերի, գործում է ավելի *իմացական*, քան *ներգործման* ոլորտում: Պատկերավորման գործառնություն կրկնությունը կրկնակի տեղեկատվություն է տալիս. նրա յուրաքանչյուր մասը բերում է իր ուղերձը, մյուս կողմից՝ ունկնդրի համար այն գործում է իբրև նշան, որը նա պետք է լրացնի մտքում՝ Ա: - ժամանակի հարց է , - ասաց տեր հայրը, - մի շաբաթ, երկու, մի ամիս, երկու, մի տարի, երկու, մի երեխա, հետո՝ երկու...Չետո...Ի՞նչ կա որ...Ամուսնացած մարդ կլինես, երեխաներ կունենաս, տարիներ կանցնեն... (Վ.Սարոյան):

Կրկնության միավորող գործառնություն ումանց կողմից դիտվել է որպես տեքստի տեղեկատվական հին և նոր տվյալների կապակցման միջոց «Կրկնությունը միայն տվյալների վերարտադրություն չէ, այլ տեքստի միավորման մեխանիզմ՝ հայտնիից անհայտին անցնելու համար, որը կլրացնի, կբացատրի և կզարգացնի արդեն ասվածը», - նշում է Բաբինյոտիսը:⁷ Միավորող կրկնությունը բերում է զուտ իմացական տեղեկատվություն և հետհաղորդակցական նշան չի դառնում: Այն կարող է ի հայտ գալ Ա եզրից անմիջապես հետո, փոքր միջատարածքով և ստեղծել տեղեկատվական մեկնաբանության ամբողջական դաշտ: Մեր տպավորությամբ՝ կրկնությունը պարտադիր պայման է կապակցված զրույցի համար և նրան տալիս է վերտեքստային պահանջից բխող ձևային կազմակերպվածություն: Միավորող կրկնության նախորդ արտահայտության տվյալները կրկնվում են իբրև հիմք, որպեսզի միտքը հարստանա նոր լրատվությամբ:

⁷ Μπαμπινιώτης Γ. Γλωσσολογία και λογοτεχνία (από την Τεχνική στην Τέχνη του Λόγου). Αθήνα. ΟΕΔΒ. 1991: 267:

Ա: - Ի՞նչ նորություն: Վա՛ն նորություն...Պասալիքները շատացել են, պարոն գնդապետ (Դ.Դեմիրճյան):

Ա: - Πολύ πλούσιος; / Ա:- Շա՞տ հարուստ է: Β: - Αληθινός Ὠνάσης.

Բ:- Իսկական Ὀνάσις (Καρράς Σ.):

Չետագոտության վերջում սխեմայի ձևով ներկայացվում է «կրկնություն-գործառույթների» տիպաբանական դասակարգման աղյուսակը, որը կառուցված է կրկնության՝ մեր բացահայտած համակարգային բոլոր տարբերակիչ հատկանիշների համալիր հաշվառմամբ:

Եզրակացություններում ներկայացվում են ատենախոսության հետևյալ ընդհանրացումները.

1. Լեզուներում կրկնվող կառույցների բարձր հաճախականությունը նպաստում է հաղորդակցական բազմաթիվ նպատակներ արտահայտելուն, որոնք բաժանվում են երկու դասի: Առաջինն իրականացնում է մարտավարական ներգործման և փոխազդեցության գործառույթ: Երկրորդ դասի գործառույթները կապված են հաղորդակցման ընդհանուր ռազմավարության հետ և ուղղված են հաղորդվող տեղեկատվության իմացական տեսակին: Ըստ ամենայնի, հաղորդակցությունը մի կրկնություն է, որն ինքն է թելադրում իր՝ -ձևերի բազմազանությունը՝ որպես հաղորդակցության Ա և Բ կողմերից սերված կառույցներ,

-լեզվի տարբեր մակարդակներում և խոսքային կառույցներում սերված կրկնությունների տեսակները՝ հենվելով լեզվական, տեքստային և ընդհանրապես հաղորդակցական գործոնների վրա,

-իմաստային կրկնությունները, որոնք ընդարձակում են կրկնությունների սահմանները հոմանիշների և գերբառերի, շարահյուսական կառույցի կամ նրա տարրերի լեզվական կրկնություններից (լեզվական փաստ) մինչև խոսույթի իմաստային կրկնություններ (խոսույթային փաստ), որոնց կայացմանն օժանդակում են խոսույթի կրնության բաղադրիչները, դրանց գործոնները, զբաղեցրած դիրքերը, իրադրական պայմանները:

2. Կոնկրետ հաղորդակցական նպատակներ ապահովող կրկնության սույն դասակարգումից բխում են նաև եզրակացություններ, ըստ որոնց նպատակահարմար է դառնում կրկնություն-գործառույթների տիպերը դասակարգել մեր կողմից տարբերակված երեք խմբում:

Առաջին խումբն ընդգրկում է կրկնությունների տիպաբանության «շեշտման», «հուզական լարվածության», «համագործակցության» և «բովան-

դակային արձագանքման» առաջին չորս տիպերի գործառույթները: Սրանց ընդհանուր հատկանիշն այն է, որ կրկնվող սխեմայի մեջ Ա եզրը ամեն անգամ մի նոր ձևով է կրկնվում, որի ուսումնասիրությամբ էլ բացահայտվում է կրկնողի յուրահատուկ «մեկնաբանությունը»: «Ներդրումը շեշտելու» դեպքում խոսողը կառույցի կամ նրա մի մասի կրկնության միջոցով շեշտում է Ա եզրը. «համագործակցության» դեպքում համաձայնվում կամ չի համաձայնվում խոսողի հետ, իսկ «պարզաբանման-տարածայնության» դեպքում՝ պարզաբանում է պահանջում կամ նախապատրաստում և արտահայտում է տարածայնություն. «հուզական լարվածության» դեպքում արտահայտում է կրկնողի ներքին հուզումը՝ ամեն անգամ կապված որևէ կոնկրետ իրադարձության հետ: Այստեղ կրկնությունը գործում է իբրև «մեկնաբանություն», որը կապակցված հանդես է գալիս հաղորդակցման դասական կաղապարի մասնակիցների՝ հաղորդողի, ընդունողի, հաղորդման և հաղորդակցական գործոնների հետ միասին:

Երկրորդ խումբը պարունակում է միայն «աղմուկով պայմանավորված» կրկնության գործառույթները: Այստեղ կրկնությունը չի ազդում Ա եզրի վրա, որը, հակառակ կրկնողի ցանկության, անկախ պատճառներով չի ընկալվել ունկնդրի կողմից: Այս դեպքում կրկնությունը գործում է իբրև հետագա հաղորդակցման «կանխավարկած»: Որպեսզի տեղի ունենա փոխազդեցություն, ունկնդիրը պետք է նախ և առաջ լսի հաղորդումը: Այստեղ կրկնությունը վերաբերում է հաղորդակցման համակարգի միջավայրին և կրկին համարվում է ներգործող:

Երրորդ խումբը, կրկնության գործառույթների առանձնահատկություններից դատելով, իմացական է և ընդգրկում է կրկնության «պատկերավորող» և «միավորող գործառույթները»: Ա եզրը ո՛չ ազդում է Բ եզրի վրա, ո՛չ էլ կապված է հաղորդակցման գործոնների հետ: Երկու դեպքերում էլ կրկնությունը կապված է հաղորդման բովանդակության հետ: Պատկերավոր կրկնության դեպքում նրա Ա և Բ եզրերը դիմում են գործողությունների կրկնողականության - տևականության - շարունակականության տպավորություն ստեղծելուն, իսկ միավորող կրկնության դեպքում օգտագործվում է հնի հետ նոր տեղեկատվությունը միավորելու հնարավորություն:

Նշված եզրակացությունները վերաբերում են այն կոնկրետ ուղիներին, որոնցով կրկնությունը գործադրվում է հաղորդակցման նպատակների ապահովման համար: Սույն աշխատանքից բխում են նաև ընդհանուր

եզրակացություններ, որոնցում կրկնությունը ներկայանում է իբրև հաղորդակցական լայն ռազմավարության եական գործոն:

3. Ձևավորված լեզվական նյութը դարձյալ շրջանառության մեջ դնելու շնորհիվ կրկնությունը խոսույթում կատարում է երկու կարևոր դեր՝

- խոսողին և ունկնդրին ցույց է տալիս լեզվական միավորների կիրառման առավել տնտեսող ճանապարհ, որը բոլորովին կարիք չունի մշակելու լեզվական նոր տվյալներ:

- չի հաղորդում իմացական նոր տեղեկատվություն, քանի որ նրա գոյությունը կապված է արդեն հայտնի տվյալների հետ:

4. Կրկնությունը՝ իբրև առանձին նպատակների հասնելու համար պատրաստի լեզվական նյութ, և՛ հաղորդման նպատակադրման, և՛ ընկալման գործընթացում դառնում է տնտեսման լուրջ գործիք: Խոսողը, առանց նոր ձևերի դիմելու, կարող է տեքստում եղած արտահայտչամիջոցների նվազագույն փոփոխությունների միջոցով տեղեկատվություն հաղորդել: Մյուս կողմից էլ՝ ունկնդիրն ավելի դյուրին է ընկալում ասվածը, քանի որ չի ծանրաբեռնվում ավելի ընդարձակ լեզվական նյութի ապակողավորումով: Բանավոր հաղորդակցումը զուրկ է հաղորդմանը կամ նրա մի մասին անդրադառնալու գրավոր խոսքի հնարավորությունից, ուստի կրկնության բերած ջանքերի տնտեսումը կրկնակի է և վերաբերում է ինչպես ներդրման փուլին (հաղորդող), այնպես էլ ընկալման փուլին (ընդունող):

Իսկապես լեզվի նվազագույն ճիգի, խոսքի կառույցների զեղչման, ծավալուն կառույցների փոխարեն դերանունների և լեզվական միավորների փոխարեն հաղորդակցական միջավայրի գործոնների օգտագործման և այլնի շնորհիվ լեզվական հաղորդակցումն ուշադիր է աննպատակ ջանքերի նկատմամբ և զնահատում է կրկնվող տվյալների տնտեսող հնարավորությունը, որպեսզի, գործելով իբրև հետհաղորդակցական մշան, հաղորդի ներգործող բնույթի տեղեկատվություն՝ նրան հնարավորություն տալով հենվելու կրկնվող լեզվական տվյալների օպտիմալ պայմանների վրա:

5. Մեր ուսումնասիրությամբ պարզել ենք, որ ունկնդիրը, իբրև ներգործում «մեկնաբանելու» ճանապարհով (ներդրում, հաստատում, կասկած, համաձայնություն և այլն) կրկնվող տվյալը համադրում է ասույթի ընդհանուր տեղեկատվության հետ, ուստի առիթ է ունենում մտածելու, թե ինչու է կրկնվում հին տեղեկատվությունը և «գուշակելու» այն կոնկրետ նպատակը, որին այն ծառայում է:

6. Կրկնության քննարկված օրինակների հիման վրա բացահայտված մեխանիզմը մեզ օգնեց տալու հետևյալ ձևակերպումը. «Կրկնությունն այն չէ, երբ նույն բանը կրկին է ասվում: Այն ծառայում է լեզվի ընդհանուր և հատուկ գործառույթների արտահայտմանը, որոնք ի հայտ են գալիս կրկնության հասարակական և զրուցակցային դերերի վերլուծությունից և կոնկրետ միջավայրում իրականանում են խոսող-ունկնդիր փոխհարաբերության միջոցով»:

7. Եթե վերը նշվածը ներգործման միկրոնակարգակուն առնչվում է կրկնության դերին և նշանակությանը, ապա տեքստի, երկխոսության և առհասարակ խոսքի մակրոհամակարգում դեռ բաց հարցեր են մնում՝ կապված կրկնության գործունեությունն ուղղորդող գործոնների հետ (տարածություն, ժամանակ և այլն): Ի՞նչ դեր են կատարում այն չափանիշները, որոնք առնչվում են հաղորդակցման մասնակիցներին, օրինակ՝ խոսողի/ունկնդրի հիշողությունը: Ո՞րն է վերջապես միջտեքստայնության և կրկնության կոնկրետ կապը:

Առավել մեծ հետաքրքրություն կներկայացնեին այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են մի կողմից՝ կրկնության կապը մշակութային զարգացման հետ, և մյուս կողմից՝ օմթոգենեզի հետ՝ հիմք ընդունելով այն փաստը, որ այս մակարդակներն են հաճախ պատճառ դառնում զուգահեռությունների ստեղծման համար:

8. Մեր առաջադրած խնդիրների ոլորտում հայերենն ու հունարենը «կրկնություն-գործառույթ» անփոփոխակների լուսաբանման առումով լրացնում են միմյանց, հանդես են բերում անդրլեզվական ընդհանրություններ, որտեղ նրանց սոցիոմշակութային և լեզվամշակութային առանձնահատկությունները էական դեր չեն խաղում, ուստի դրանց բնութագրությունը դուրս է մեր հետազոտական նպատակներից: Մեր ունեցած օրինակների ուսումնասիրության հիման վրա նկատելի է, ասենք, որ կրկնությունների գործառութային տիպերը լուսաբանող օրինակներում հունարենի արտահայտչամիջոցները՝ կապված ասության ձայնի երաժշտական շարժման և հնչերանգային միջոցների հարստության հետ, որոշ չափով գերազանցում են գրական արևելահայերենի հնարավորությունները: Իսկ գրական արևմտահայերենը և գրաբարը այս առումով անհամեմատ ավելի շահեկան վիճակում են, քան արևելահայերենը և նշված հնարավորություններով ավելի մոտ են

հունարենին: Սակայն այս նկատառումը նախնական է և անհրաժեշտ է հետագա լուրջ հետազոտություն:

Ընդհանուր տպավորությունն այն է, որ հետազոտության ընդգրկած նյութը անընդհատ ընդարձակման կարիք ունի, քանի որ կրկնության դերը խոսույթում շատ նշանակալի է, իսկ վերը բերված հիմնահարցերի պատասխանը, երբ էլ որ այն հնարավոր լինի տալ, շատ կարևոր քայլ կդառնա կրկնության՝ որպես լեզվի հիմնական մեխանիզմներից մեկի վերաբերյալ առավել ամբողջական մի հայացք ձևավորելու համար:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում:

1.Խոսույթ:

Կրկնությունը լեզվի նշանային մակարդակում, Վ.Բոյունովի անվան ԵՊԼՀ Բանբեր, 1(28), Ե.,2013, էջ 94-117:

2.

Կրկնության տիպաբանություն, Նշան, Համակարգ, Հաղորդակցում, Հոդվածների ժող.՝ նվիրված Է.Աթայանի հիշատակին, ԵՊՀ, Ե.,2011, էջ 144-152:

3. Կրկնության տիպաբանություն, ԵՊՀ, Միջազգային գիտաժողով, (Աթայանական ընթերցումներ),Ե.,2007, էջ 42-43:

4. Կրկնությունն իբրև խոսքի վերլուծության երևույթ, Ընդհանուր ականարկ,Վասն Արդարության, 2006, N 1(56), էջ 70-73:

5. Խոսք և զրույց (վերլուծություն), Մխիթար Գոշ, 2005, N 4, էջ 10-13:

6. Կրկնությունը խոսքում, Մխիթար Գոշ, 2005, N 4, էջ 16-20:

Акобджанян Армен Грачевич

Повторы в дискурсе.

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – Общее и сравнительное языкознание.

Защита состоится 14.03.2016 г. в 15:00 по адресу: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК в Институте языка им. Гр. Ачаряна Национальной академии наук РА.

Резюме.

Актуальность диссертации: Несмотря на обширную научную литературу, посвященную повторам в дискурсе, до сих пор нет таких исследований, в которых множество проявлений и функций повтора были бы представлены с учетом его общих системообразующих признаков. Трудность систематизации состоит в том, что, формы повтора слишком многообразны, а факторы, влияющие на определение его функций, часто выходят за рамки текста и «скрыты» во внелингвистических пространствах: в ядерных конструкциях, в речевых ситуациях /хронотоп/, в лабиринтах сложных соотношений явлений живого общения.

Цель диссертации: Цель данной работы - исследовать различные проявления повтора в художественном дискурсе; с учетом внедрений разных компонентов дискурса определить их инвариантные и варианты функции, критерии разграничения.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и четырех приложений. Объем работы – 133 страницы.

Во введении обосновывается тема и история вопроса, отмечается её актуальность и новизна, излагаются основные цели и задачи, уточняются методы и объект исследования, подчёркивается его научная и практическая значимость.

Первая глава («Исследование повтора дискурса в научной литературе») представляет анализ повтора в психолингвистике, в теориях текста и дискурса, в результате чего отбираются отмеченные специалистами некоторые важные признаки повтора для дальнейшего их дополнения новыми дифференциальными признаками, отмеченными на основе изучения множества монологических, диалогических полилогических речевых конструкций армянского и греческого художественного дискурса.

Во второй главе («Критерии классификации повторов») в пяти параграфах излагаются научно обоснованные системы принципов и дифференциальных признаков и рабочее определение повтора, которые как инструмент используются в будущей многопризнаковой типологической классификации множественных биномов дискурса «повтор-функция». Отдельно рассматриваются повторы единиц разных уровней языка и семантически более расширенно, чем принято в традиционной лингвистике, дается новая классификация семантического повтора.

Третья глава («Классификация функций повтора дискурса» определяет семь его функций и их разновидностей. Все они рассматриваются с позиций следующих критериев типологической классификации: *формы выражения повтора, порождения повтора от того же, или иного говорящего, критерий характеристики повторов, вида связи* (говорящий-слушающий-сообщение), *вида внесенной информации повтором*. Перечисленные критерии, выступают как дифференциальные признаки, позволяющие функционально-семантически противопоставлять эти функции и представляют все это как единое системное целое.

В заключении представлены выводы, вытекающие из всего исследования. Они затрагивают типы классификаций по форме, содержанию и функциям повторов дискурса. По форме повторы в дискурсе классифицируются по 5 видам. Повторы в дискурсе всегда выступают с определенным содержанием, которое уточняется по трём типам функций. Первый тип действует как комментарий, связанный с участниками, с внешними факторами общения и побуждает слушателя на какое-то действие (это повторы с функциями акцентирования, эмоционального напряжения, сотрудничества и содержательного отображения). Второй тип включает только функции, выполняемые повтором по причине шума, которые действуют как «презумпция» для последующего общения. Третий тип включает функции количественного изображения и связывания мысли и не побуждает к действию, а выражает познавательную информацию (когнитивно-языковую) или связывает новую и старую информацию как смысловое внедрение двух частей повтора.

Armen Hakobjanyan
Repetitions in Discourse

Dissertation for the scientific degree of a Candidate in Philology, specialization 10.02.02 – General and Comparative Linguistics. The defense will be held at the session of the Specialized Council on Linguistics 019 of the Higher Attestation Commission at the Institute of Languages after Hrachya Acharyan of the RA National Academy of Sciences at 15 Grigor Lusavoritch Str., Yerevan, 0015, at 15:00 on 14.03.2016.

Summary.

Regardless of the existing voluminous scientific literature, devoted to repetitions in discourse, there have not yet been any studies addressing the multiple manifestations and the functions of repetition with a consideration of their general systemic features. The difficulty of systematization consists in the fact that the forms of repetition are extremely diverse, and the factors that impact on the identification of its functions are often beyond the text and are “hidden” in extra-linguistic domains: in nuclear structures, in speech situations (chronotope), in the labyrinths of complex interrelations of phenomena as pertaining to the living society.

The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references and four appendices. The volume of the work is 133 pages.

The introduction contains the rationale and the background of the study on this topic, highlights the topicality and novelty of the matter under study, defines the aims and objectives of the study, describes the methods and the object of research, and underlines its theoretical and practical value.

Chapter One (“A Study of Discursive Repetition in Scientific Literature”) presents an analysis of repetition in psycholinguistics, in the theories of text and discourse, as a result of which a few significant features of repetition are selected as mentioned by specialists for the further identification of more differential features, singled out after the study of multiple monologic, dialogic, and polylogic speech structures from the Armenian and Greek literary discourse.

Chapter Two (“Criteria for Classifying Repetitions”) contains five subchapters which address the scientifically substantiated systems of principles, as well as the differential features and the working definition of repetition, which are used as a toolkit later for the multi-feature typological classification of numerous binomials of discourse according to “repetition - function”. The repetitions of linguistic units belonging to various levels of the language are considered separately and at a wider semantic angle, than the usual practice in traditional linguistics has been; consequently a new classification of the semantic repetition is provided.

Chapter Three (“Classification of Functions of Repetition in Discourse”) defines seven functions of repetition and their varieties. They are all viewed from the standpoint of the following criteria of typological classification: *the forms of expression for repetitions, repetition used by the same or a different speaker, criteria for the characterization of repetitions, types of relations (speaker – listener - message), the kind of the information introduced through repetition*. The enumerated criteria act as

differential features that allow to contrast these functions from the functional and semantic perspectives and present all this as a single systemic integrity.

The Conclusion presents the findings drawn as a result of the research. They address the approaches to classification according to the forms, content and functions of the repetition of discourse. According to the form, repetitions in discourse are classified into 5 types. Repetitions in discourse always express a definite message which is later specified due to three possible functions. The first type acts as a commentary, regarding the participants or the external factors of communication and urges the listener to take a certain kind of an action (these are the repetitions with the functions of emphasis, emotional tension, cooperation and content mapping). The second type includes only the functions of repetition under noisy circumstances, which act as a “presumption” for the communication to follow. The third type includes functions of quantitative presentation and cohesion of the thought and does not call for action, but expresses the cognitive information (cognitive-linguistic) or connects the new and old information as the meaningful introduction of the two parts of the repetition.